

ՀՏԴ 809.198.1

Հայոց լեզու

ՀՆՁԵՐԱՆՔԸ ԵՎ ՏՐՈՂՈՒՄԸ ԽՈՍՔԻՄԱՍԱՅԻՆ ՏԱՐԱՐԺԵՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԲԵՐԱԿՄԱՆ ՄԻՋՈՑ Հասմիկ ՂԱԶԱՐՅԱՆ

Բանալի բառեր՝ հնչերանգ, տրոհում, տարարժեքություն, գոյական/ածական, գոյական/դերբայ, ածական/մակբայ, ածական/կապ, մակբայ/կապ, մակբայ/վերաբերական, բայ/վերաբերական:

Ключевые слова - интонация, обособление, конверсия, существительное/прилагательное, существительное/причастие, прилагательное/ наречие, прилагательное/предлог-послелог, наречие/послелог, глагол/модальные слова, наречие/ модальные слова.

Key words - intonation, breaking, conversion, noun/adjective, noun/participle, adjective/adverb, adjective/connective, adverb/connective, Verb/modal words, adverb/modal words

А. Газарян

Интонация и сегментация как средство смысловой дифференциации

В процессе развития языка некоторые слова и словообразования, обусловленные лексическими и функциональными особенностями, начинают совмещать в себе несколько морфологических значений, выдвигая вперед грамматическую многозначность.

В статье представлена роль интонационно-звуковых, синтаксических, смысловых факторов и роль соответствующих знаков обособления в деле определения объектно-грамматических отношений между членами предложения, а также обусловленное именно этим смысловое разграничение при конверсии частей речи.

A. Ghazaryan

Intonation and Breaking as a Means of Sematic Differentiation

In the process of language development some words and word-forms, due to their lexical and functional features, begin to combine several morphological values advancing grammatical ambiguity.

The article presents the role of intonation and sound, syntactic, semantic factors and appropriate signs of separation in the identification of object-grammatical relations of the sentence, and also, precisely due to these factors, sematic distinction in the parts of speech conversion.

Լեզվի պատմական զարգացման ընթացքում որոշ բառեր ու բառաձևեր, բառիմաստային և գործառական յուրահատկություններով պայմանավորված, սկսում են համատեղել խոսքիմասային մի քանի իմաստներ՝ առաջ բերելով քերականական իմաստի երկփեղկվածություն, տարարժեքություն: Հոդվածում ներկայացվում է հնչերանգային, շարահյուսական, իմաստային գործոնների և համապատասխան տրոհության նշանների դերը նախադասության անդամների լրացական-քերականական հարաբերությունները որոշելու և, հենց դրանով պայմանավորված, խոսքիմասային տարարժեքություն ունեցող բառերի իմաստները տարբերակելու, երկիմաստ չդարձնելու գործում:

Լեզվի պատմական զարգացման ընթացքում որոշ բառեր ու բառաձևեր, բառիմաստային և գործառական յուրահատկություններով պայմանավորված, սկսում են համատեղել խոսքիմասային մի քանի իմաստներ՝ առաջ բերելով քերականական իմաստի երկփեղկվածություն, տարարժեքություն: Այդպիսի միավորների խոսքիմասային պատկանելությունը որոշելը կապված է որոշ դժվարությունների հետ՝ պայմանավորված դրանց՝ մեկից ավելի խոսքիմասային իմաստ ունենալու և համապատասխան կիրառությամբ գործածվելու հանգամանքով: «Այդ պատճառով էլ դրանց ձևաբանական արժեքների իմաստազատումը տեղի է ունենում խոսքային միջավայրում, ձևաբանական արժեքի բաշխումը կատարվում է շարահյուսական մակարդակում, քանի որ իմաստազատիչ մյուս գործոնները արտախոսքային պայմաններում չեզոքանում են»¹: Ուրեմն՝ նման բառերի, բառաձևերի շարահյուսական կիրառություններին դիմելը միջոց է դրանց քերականական ընդհանուր իմաստները որոշելու համար: Այդ նկատի ունենալով՝ Ս.Աբրահամյանը գրում է. «Կան շարահյուսական այնպիսի ընդհանուր կարգի

¹ Խաչատրյան Լ.Մ., Խոսքիմասային տարարժեքությունն արդի հայերենի կայուն կապակցություններում, Երևան, 1966, էջ 40:

կիրառություններ, որոնք հանդիսանում են բառի խոսքիմասային բնորոշ իմաստի դրսևորման փաստ: Այդպիսի կիրառությունները անհրաժեշտության դեպքում կարող են օգտագործվել և պետք է օգտագործվեն որպես տվյալ խոսքի մասի էությունը ավելի ճիշտ հասկանալու օժանդակ միջոց: Այնպես որ՝ այդ կարգի բնորոշ կիրառությունները ոչ միայն չեն հակասում բառերի ընդհանուր իմաստին, այլև հանդիսանում են այդ իմաստի, բայց արդեն խոսքիմասային երկփեղկված իմաստի արտահայտություններ և այդ երկփեղկվածությունը հաստատող փաստեր»¹: Փաստորեն շարահյուսությունը լեզվական այն մակարդակն է, որտեղ բառերի կամ բառաձևերի ձևաբանական տարաբեկությունը հիմնականում վերանում է, և այդ միավորները ստանում են մեկ նշանակություն, որով էլ հենց իրագրվում է հաղորդակցման գործընթացը: Անդրադառնալով այս հարցին՝ Գ.Զահուկյանը նշում է. «Լեզվի մեջ չկա բացարձակ համանունություն: Այն դեպքում, երբ նշանները արտաքին բոլոր հատկանիշներով համընկնում են, հանդես են գալիս լրացուցիչ տարբերակիչներ՝ կապակցելիությունը (իրադրական և կոնտեքստային) և հաճախականությունը»²:

Կապակցումն այս կամ այն բառի հետ որոշակի է դարձնում տարաբեկություն ունեցող բառերի խոսքիմասային տարբեր իմաստները, որոնց համար տվյալ դեպքում տարբերակման միջոց են ծառայում հնչերանգը և տրոհության, երբեմն առոգանության նշանները:

Հնչերանգը թեև ինքնին հնչյունաբանական միավոր է՝ կազմված ավելի փոքր տարրերից՝ խոսքի մեղեդիականություն, տեմպ, տակտ, ռիթմ, խոսքերանգ, դադար, տրամաբանական շեշտ, բայց տարբերակում է նաև քերականական իմաստներ: Հնչերանգի որևէ բաղադրիչի փոփոխությամբ արտահայտվում են հաղորդակցական տարբեր իմաստներ, նրանով ձևավորվում է նախադասության մտքի ավարտվածությունն ու ամբողջականությունը: Նա միաժամանակ ստորոգման կառուցվածքային ուրույն միջոց է և կարևոր դեր է կատարում նաև նախադասությունների կամ նրանցում նախադասության անդամների միջև խոսքային կապերի առկայությունը, լրացական-քերականական հարաբերությունները որոշելու, պարզելու, երկիմաստ չդարձնելու գործում: Հնչերանգի այս առանձնահատկությամբ էլ պայմանավորված է հենց նույնաբաղադրիչ նախադասություններում խոսքիմասային տարաբեկություն ունեցող բառերի տարբերակումը:

Հնչերանգն ամբողջությամբ գրավոր տեքստում արտահայտվելը դժվար է կամ անհրաժեշտելի, այդ պատճառով էլ նրա որևէ տարրն է հաստուկ կենտադրությամբ արտահայտվում: Տվյալ պարագայում մեզ հետաքրքրում են քերականական դադարները, որոնք կապված են արտասանվածքի շարահյուսական բաղադրիչների փոխհարաբերության հետ և գրավոր խոսքում հիմնականում արտահայտվում են տրոհության նշաններով: Տրոհության նշանների նշանակալիները, այսպիսով, քերականական դեր ունեցող դադարներն են, սակայն, ինչպես նշում է Ս.Աբրահամյանը. «տրոհումը սոսկ դադար չէ, այլ դադարի և տրոհվող եզրերի յուրահատուկ հնչման գույքորդում՝ պայմանավորված տվյալ կառույցի բաղադրիչների քերականական հարաբերությամբ»³: Հետևաբար գրավոր խոսքը կենտադրելիս պետք է հաշվի առնել ինչպես հնչերանգային, այնպես էլ շարահյուսական և իմաստային գործոնները, որոնք շատ հաճախ համատեղվում են կենտադրական միևնույն իրողության մեջ: Ուրեմն՝ այս երեք գործոնները պետք է ոչ թե հակադրել, այլ հաշվի առնել գուցա հեռ ձևով, քանի որ դրանք, թեև տարբեր կողմերով, այնուամենայնիվ, բացահայտում, ամբողջացնում և լրացնում են միմյանց:

Առաջնորդվելով այս սկզբունքով և կատարելով ուսումնասիրություններ՝ եկել ենք այն եզրակացության, որ ժամանակակից հայերենում յուրահատուկ հնչերանգով և համապատասխան տրոհությամբ նույնաբաղադրիչ նախադասություններում կարող են տարբերակվել *գոյական/ածական, գոյական/ենթակայական դերբայ, գոյական/հարակատար դերբայ, ածական/մակբայ, ածական/կապ, մակբայ/կապ, բայ/վերաբերական, մակբայ/վերաբերական, մակբայ/վերաբերական/շաղկապ* տարաբեկություն ունեցող մի շարք բառեր: Քննենք դրանք առանձին-առանձին:

1. Գոյական/ածական: Ածականի նախնական արժեքի երկփեղկման հետևանքով արդի հայերենում գոյական/ածական արժեքներ են համատեղում *ազգայնական, առևտրական, դպրոցական, կրոնական, հոգևորական, մահմեդական, հանրապետական, հեղափոխական, կոլտնտեսական, կուսակցա-*

1 Աբրահամյան Ս.Գ., Հայոց լեզու. Շարահյուսություն, Երևան, 2004, էջ 12:

2 Զահուկյան Գ.Բ., Ժամանակակից հայերենի տնտության հիմունքները, Երևան, 1974, էջ 55:

3 Աբրահամյան Ս.Գ., Հայոց լեզու. Շարահյուսություն, Երևան, 2004, էջ 8:

կան, կոմերիտական, բանակային, հարվածային, ճակատային, փողոցային, շարքային, ծովային, չքավոր, ձիավոր, վիրավոր, աշխատավոր, զինվոր, ուխտավոր, կապավոր, արհեստավոր, ճգնավոր, խուզարկու, բանասարկու, թեկնածու, իմաստուն, գիտուն, խաղաղարար, հավաքարար, փրկիչ, քաղաքացի, գյուղացի, հայ, վրացի, աղքատ, հարուստ, ժյատ, նրիտասարդ, պառավ, ծեր և այլ բառեր:

Սրանք հիմնականում ածականի փոխանվանական կիրառության հիմքի վրա առաջացած միավորներ են, որոնք ածականական կիրառությամբ ցույց են տալիս հատկանիշ, գոյականական կիրառությամբ՝ այդ հատկանիշով բնորոշվող անձ: Նշված բառերը, նույնաբաղադրիչ նախադասություններում արտաբերվելով կոչականին բնորոշ շեշտված հնչերանգով և գրավոր խոսքում նախադասության մյուս անդամներից տրոհվելով ստորակետով, գործառնում են որպես գոյական, արտաբերվելով առանց հնչերանգային դադարի, գրավոր խոսքում էլ արտահայտվելով առանց տրոհման, գործառնում են որպես ածական:

Հմմտ.՝ 1.Երիտասարդ, Ավոն մարտնչեց հայրենիքի ազատության համար:

2.Երիտասարդ Ավոն մարտնչեց հայրենիքի ազատության համար:

2.Գոյական/ենթակայական դերբայ: Ենթակայական դերբայը, որոշ շարահյուսական կապակցությունների մեջ հաճախակի գործածվելով, ունենում է իմաստային յուրահատուկ զարգացում: «Մտախոհում է նրա արտահայտած գործողության, ընթացքի գաղափարը, և միևնույն ժամանակ նրա ընդհանուր առարկայական նշանակությունը վերածվում է թանձրացականի: Հասկանալի է, որ դրանով նույն ձևը չի դադարում դերբայ լինելուց, այլ կիրառությունների մեջ նա պահում է իր հարաբերությունները բայական ձևերի հետ որպես դերբայ՝ գործողության, ընթացքի և առարկայական նշանակության գաղափարներով միաժամանակ»¹: Այդպիսի բառերից են՝ *ասմունքող, աշխատող, ծառայող, սիրող, մեղադրող, մտածող, հետազոտող, ուսումնասիրող, արդյունաբերող, շահագործող, ուսանող, գրող, մատուցող, ծնող* և այլն: Որպես անորոշ դերբայներին համապատասխան ենթակայական դերբայներ՝ սրանք նշանակում են *նա, ով կատարում է գործողությունը* և պահանջում են ուղիղ խնդիր: Օր.՝ *Նա, ով գրում է, նա, ով ուսումնասիրում է* և այլն: Միաժամանակ այս ձևերը իրենց մեջ արդեն իսկ եղած առարկայական իմաստի թանձրացականացմամբ նշանակում են ինչ-որ գործողություն կատարող անձ: Նույնաբաղադրիչ նախադասություններում նշված բառերը, արտաբերվելով շեշտված հնչերանգով, գործածվելով իբրև կոչական և նախադասության մյուս անդամներից տրոհվելով ստորակետով, ըմբռնվում են առարկայական նշանակությամբ, գործառնում են որպես գոյական, առանց շեշտված հնչերանգի և տրոհման՝ գործառնում են որպես ենթակայական դերբայ:

Հմմտ.՝ 1.Ընտրող, քաղաքացին վարվեց այնպես, ինչպես պարտավոր էր:

2.Ընտրող քաղաքացին վարվեց այնպես, ինչպես պարտավոր էր:

3.Գոյական/հարակատար դերբայ: Իմաստային առանձնահատկությամբ պայմանավորված՝ սակավաթիվ բառեր, նույնաբաղադրիչ նախադասություններում հաջորդող գոյականի հետ արտաբերվելով թվարկման հնչերանգով, որն էլ գրավոր խոսքում արտահայտվում է ստորակետով, գործառնում են որպես գոյական, արտաբերվելով առանց հնչերանգային դադարի և համապատասխան տրոհության՝ գործառնում են որպես հարակատար դերբայ:

Հմմտ.՝ 1.Գնեցի խորոված, կարտոֆիլ և շատ ուրիշ բաներ:

2.Գնեցի խորոված կարտոֆիլ և շատ ուրիշ բաներ:

1.Գծեցի հատված, ճառագայթներ:

2.Գծեցի հատված ճառագայթներ:

4.Ածական/մակբայ: Լեզվի պատմական զարգացման ընթացքում խոսքիմասային մասնակի փոխանցման հետևանքով ածականը կարող է համատեղել նաև մակբայի իմաստ՝ ցուցաբերելով խոսքիմասային տարաբժեքություն: Նույնաբաղադրիչ նախադասություններում հնչերանգի և տրոհության դերը չափազանց կարևորվում է նման բառերի լրացական հարաբերությունը նրկիմաստ չդարձնելու գործում, մանավանդ որ բառային միջավայրը թույլ է տալիս, որ տվյալ բառը, կատարելով շարահյուսական տարբեր պաշտոններ, հավասարապես վերագրվի, լրացնի և՛ նախորդող, և՛ հաջորդող բառին:

¹ Ասատրյան Մ.Ե., Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 1989, էջ 250:

Հմմտ.՝ 1. Հայացքը՝ հանդարտ, տխուր, սահում էր նկարների վրայով:

2. Հայացքը հանդարտ, տխուր սահում էր նկարների վրայով:

Եթե ածական-մակբայ տարարժեքություն ունեցող բառերը հնչերանգի տարբեր ելևէջներով ու տրոհությամբ լրացնում են գոյականին, գործառնում են որպես ածական, եթե լրացնում են բային, գործառնում են որպես մակբայ: Այդպիսի բառերից են՝ *ամուր, ամփոփ, աջ, անջատ, առատ, զվարթ, ժիր, լավ, լուռ, խաղաղ, խիստ, խոժոռ, կարճ, հանդարտ, հարթ, հավասար, հեշտ, հաշտ, ձախ, ճիշտ, մարմանդ, մեղմ, մռայլ, շիտակ, շռայլ, փայլ, սրակառ, պարզ, պարկեշտ, սեղմ, սխալ, սուտ, փատ, տխուր, ծուռ, ձիգ, նոր, նվազ* և այլն:

5. Ածական/կապ: Հնչերանգով ու տրոհությամբ (բույծով) կարող են տարբերակվել նաև *համաձայն, հակառակ, անկախ* կապական բառերը համանուն ածականներից:

Հմմտ.՝ 1. Համաձայն կողմերի ընդունած որոշման՝ հրահանգը տրվել է:

2. Համաձայն կողմերի ընդունած որոշման հրահանգը տրվել է:

1. Հակառակ կուսակցությունների վարած քաղաքականության՝ սկզբունքները պետք է փոխել:

2. Հակառակ կուսակցությունների վարած քաղաքականության սկզբունքները պետք է փոխել:

1. Անկախ պետությունների միջամտությունից՝ պետք է հրաժարվել:

2. Անկախ պետությունների միջամտությունից պետք է հրաժարվել:

Առաջին նախադասություններում հնչերանգային դադարը և տրոհումը նպաստում են նշված բառերի հարաբերության իմաստի դրսևորմանը:

6. Մակբայ/կապ: Մի շարք տեղի և ժամանակի կապեր ունեն մակբայական ծագում: Հիմնականում մակբայների և կապերի միջև հարաբերություններ նկատվում են հետևյալ հիմունքով: «Առարկայական նշանակությամբ թուլացած բառերը, հակվելով բայերին, մակբայական իմաստ են արտահայտում, իսկ հակվելով գոյականներին՝ կապային իմաստ են արտահայտում»¹: Ահա թե ինչու ժամանակակից հայերենում մի շարք բառեր ըստ կիրառության մակբայներ կամ կապեր են, ինչպես՝ *առաջ, հետո, հեռու, դուրս, վերև, ներքև* և այլն: Դրանց մեջ կան և այնպիսիք, որոնք նույն շարահյուսական կառույցի մեջ տարբերակվում են միայն հնչերանգով և տրոհությամբ:

Հմմտ.՝ 1. Ձանձրացել եմ ներկայանալուց, առաջ այդպես չէր:

2. Ձանձրացել եմ, ներկայանալուց առաջ այդպես չէր:

1. Հեռացիր ինձնից, հեռու՝ ապրիր:

2. Հեռացի՛ր, ինձնից հեռու ապրի՛ր:

1. Հեռացավ նախասրահից, դուրս նայեց:

2. Հեռացավ, նախասրահից դուրս նայեց:

7. Բայ/վերաբերական: Վերաբերականների մի զգալի մասը պատմականորեն առաջացել և առաջանում է զանազան խոսքի մասերի պատկանող բառերից՝ վերջիններիս իմաստային յուրահատուկ զարգացման հետևանքով:

Հիմնականում վերաբերականների են վերածվում այնպիսի ձևեր, որոնց բառային իմաստի մեջ զգացվում են կերպայության, եղանակավորության, խոսողի դատողական վերաբերմունքի նրանցներ: Ժամանակակից հայերենում կան բայ / վերաբերական տարարժեքություն դրսևորող մի շարք բառեր՝ *բեր, տես, տեսնենք, ասա, թող, եկ, եկեք, կարծես, կարծես*, որոնք, դրվելով խոնարհված բայերի մոտ և արտաբերվելով առանց հնչերանգային դադարի, առանց տրոհման, ձևք են բերում եղանակավորման իմաստ: Նույն բառերը նույն դիրքում գործառնում են բայական իմաստով, երբ արտաբերվում են ստորադասական նախադասությանը բնորոշ բացատրական հնչերանգով և տրոհվում բույծով: Արդյունքում ունենում ենք շարահարական կապակցությամբ բարդ ստորադասական նախադասություն, որտեղ նշված բառերը գլխավոր նախադասության պարզ ստորոգյալներն են:

Հմմտ.՝ 1. Բեր տեսնեմ:

2. Բեր՝ տեսնեմ:

¹ Ասատրյան Մ. Ե., Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 1989, էջ 366:

1. Ասա լսեն մեզ:
2. Ասա՝ լսեն մեզ:
1. Տես ինչ է անում:
2. Տես՝ ինչ է անում:
1. Թող ուրախ լինեն:
2. Թող՝ ուրախ լինեն:
1. Եկ տեսնեն:
2. Եկ՝ տեսնեն:

8. Մակբայ/շաղկապ/վերաբերական: Նշված տարարժեքությամբ առանձնանում է է/ բառը:

Հմմտ.՝ 1. Իմ ընկերը՝ Կարոն, էլ չէր եկել:

2. Իմ ընկերը՝ Կարոն էլ չէր եկել:

Առաջին նախադասության մեջ է/ բառին նախորդող հնչերանգային դադարը, որն արտահայտվում է ստորակետով, նպաստում է այդ բառի մակբայական (այլևս) իմաստի արտահայտմանը, մինչդեռ երկրորդ նախադասության մեջ հնչերանգային դադարի, հետևապես և տրոհության նշանի բացակայությունը նույն դիրքում է/ բառին հաղորդում է սաստկական վերաբերականի կամ համադասական շաղկապի (ևս) իմաստներ:

9. Մակբայ/վերաբերական: Վերաբերականների մեջ առանձին խումբ են կազմում մակբայական ծագում ունեցողները, որոնց մի մասն այսօր առանձնանում է մակբայ/վերաբերական տարարժեքությամբ: Այդպիսի բառերից են՝ *իմիջիայլոց, մասնավորապես, առավելապես, հատկապես, հավանաբար, իսկապես, բնավ, ամենևին* և այլն: Նույնաբաղադրիչ նախադասություններում եթե նշված բառերը ներկայացնում են ձայնային ելևէջների բարձրակետը, կրում իրենց վրա տրամաբանական շեշտ և հաջորդ բառի հետ արտաբերվում առանց դադարի, գործառնում են մակբայական իմաստով: Եթե նույն բառերը, երանգավորելով ամբողջ նախադասության միտքը, իրենց հնչերանգով առանձնանում են նախադասության մյուս անդամներից, տրոհվում ստորակետով, գործառնում են վերաբերականի իմաստով:

Հմմտ.՝ 1. Ես իմիջիայլոց ասացի:

2. Ես, իմիջիայլոց, ասացի:

1. Հարցը մասնավորապես լուծվեց:

2. Հարցը, մասնավորապես, լուծվեց:

1. Այդ թեման առավելապես ինձ չի հետաքրքրում:

2. Այդ թեման, առավելապես, ինձ չի հետաքրքրում:

1. Այդ մարդկանց հատկապես չեմ ճանաչում:

2. Այդ մարդկանց, հատկապես, չեմ ճանաչում:

Երբեմն նույն ձևով որոշ բառեր համատեղում են և՛ մակբայի, և՛ վերաբերականի իմաստ (այս դեպքում երանգավորվում է նախադասության որևէ անդամը):

Այսպիսով՝ կատարված վերլուծությունները ցույց են տալիս, թե նույնաբաղադրիչ նախադասություններում ինչքան մեծ է հնչերանգային, շարահյուսական, իմաստային գործոնների և համապատասխան տրոհության նշանների դերը նախադասության անդամների լրացական-քերականական հարաբերությունները որոշելու և, հենց դրանով պայմանավորված, խոսքիմասային տարարժեքություն ունեցող բառերի իմաստները տարբերակելու, երկիմաստ չդարձնելու գործում:

Տեղեկություններ հեղինակի մասին

Հասմիկ Ղազարյան - ք.գ.թ., դոցենտ, հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն

E-mail: Hasmik.ghazaryan @mail.ru

Հոդվածը տպագրության է ներառվել խմբագրական կոլեգիայի անդամ, ք.գ.դ. Լ. Հովհաննիսյանը: